

ՎԵՐԱ

„ՄԵԿԸ ՇԱՏԵՐԻ ՀԱՄԱՐ“

Մի աղջկայ օրատետրից ¹⁾

Գէորգ:

Ես չեմ կարող բռնել լինել: Ես աշխատեցի կամքիս ուժով անցնել մեզ բաժանող անդունդը: Իզմուր: Ես ոյժ չունիմ սանձահարելու իմ զգացմունքները: Քեզ հետ իմ կեանքը կը լինէր յաւիտենական կեղծիք... Ահա թէ ինչու ես հեռանում եմ քեզնից... Հեռանում եմ ընդմիջաւ: Գէորգ: Իմ սէրը դէպի քեզ ամելի բուռն է, քան ապրելու ցանկութիւնս: Քո տանջանքը ես չեմ կարող տանել—այն էլ առանց մեղքի տանջանքը: Ես զոհ եմ մեր հասարակական կարգերի... ոչ առաջին և ոչ վերջին զոհը,—դեռ երկար ժամանակ ոչ վերջինը... Ես չափազանց թոյլ եմ այս հսկայական պայքարը տանելու համար—և չափազանց մեծակ: Բայց կատարել իմ վերջին խնդիրը, Գէորգ, իմ ամենավերջին խնդիրը... Կռուի՛ր այն Գաղափարի համար, որի պատճառով ես կորչում եմ:—Կռուի՛ր իմ յիշատակի համար, Գէորգ:

Ուղարկում եմ քեզ իմ օրագրի վերջին թերթերը: Նրա իւրաքանչիւր խօսքը իմ հոգու մի մասնիկն է... կարող ես այն հրատարակել կեղծ անուան տակ:

Եւ եթէ այն սակաւաթիւ մարդկանց մէջ, որոնց ձեռքը կ'անցնի իմ սրբութիւն սրբոցը, կը գտնուեն զէթ մի բանիւր, որ ծաղրով ու արհամարհանքով չեն շարժի այն մի կողմ... այդ էլ բաւական է ինձ համար...

Մնաս բարեաւ, Գէորգ:

Մխիթարի՛ր իմ խեղճ ծնողներին:

1) Vera „Eine für Viele“ aus dem Tagebuche eines Mädchens գիրքը ահագին աղմուկ հանեց Եւրոպայում, իբրև կանանց իրաւունքների պաշտպանութեան նուիրուած մի գեղարուեստական երկ: Մ. Քմբ.

Ուղարկում եմ քեզ մի վերջին հրաժեշտ, հիւսուած իմ սիրուց ու տանջանքներից:

Քո հաւատարիմ Վերա:

*

Սեպտեմբերի 18-ին

...Ես զարթնեցի կէս գիշերին: Չարթնեցի գիշերային արհաւիրքների և խռովեցնող երազների քաօսից: Արդէն մի քանի օր է, որ ես չունիմ թարմացնող ու անդորր քուն:

Կատաղի փոթորիկը անձրևի կաթիլներով ծեծում էր իմ պատուհանի ապակիները... միակերպ և անմիտ ձայներ... Անթափանցելի խաւարը բանդի պատերի պէս ճնշում է ինձ: Խաւարը սիրելու համար պէտք է լինել կամ չափազանց երջանիկ կամ անսահման դժբաղդ: Յրտից դողողալով ես վեր կացայ անկողնիցս և վառեցի ճրագը: Ես հաճոյքով դիտում էի, թէ ինչպէս լոյսի շողերը, թափանցելով խաւարի մէջ, կուռում են նրա հետ, աշխատելով վանել նրան...

Ես նստում եմ գրասեղանիս առաջ՝ գլուխս պաշարուած գիշերային երազների յարուցած խոհերով: Ես կը ցանկանայի լինել կատարելապէս ազնիւ... ճշմարիտ, անչափ ճշմարիտ դէպի ինձ: Ես իմ ամբողջ էութեամբ ձգտում եմ դէպի այդ ճշմարտութիւնը: Ի՞նչ օգուտ խորամանկութեամբ հիւսուած կեղծիքներից, ի՞նչ օգուտ այն բոլոր պատրանքներից, որ բընքոյշ հոգատարութեամբ սնուում են կեղծիքի մթնոլորտում: Արդեօք, այդ սիստեմատիկ ինքնախաբէութիւնը կը տան ինձ մի կաթիլ երջանկութիւն կամ մի կտոր ինքնագոհութիւն, որը սակայն կազմում է մեր երջանկութիւնը: Կեղծիքի ծանրութեան տակ ճշմարտութիւնը աւելի և աւելի խորն է թափանցում մեր հոգու մէջ և ակօս շինում:

Ճահիճներն ու ցածր տեղերը ինձ սոսկում և զգուանք են պատճառում: Ես կամենում եմ թարմ, մաքուր և պարզ օդ շնչել: Ես կամենում խօսքերով արտայայտել այն ամենը, ինչ ինձ ճշմարտութիւն է թւում: Ես կամենում եմ յետ քաշել մերկութեան ծածկոյթը, պոկել գաղտնի շղթաները, որոնք ճնշում են անհատի ազատ զարգացումը... Ես ուզում եմ փորձել այն՝ ինչ պէտք է լինի, և բիւրեղացնել իմ նախնական էութիւնը: Միթէ ես աւելի լաւ, աւելի մաքուր և աւելի բարձր կը լինիմ, եթէ ծածկեմ ինձանից իմ գարշելիութիւնները, եթէ նրանց քողարկեմ իմ առաջ, արդարացնեմ, պատճառաբանեմ: Եւ մի-

թէ ես աւելի ստոր և աւելի վատթար կը լինիմ, եթէ զգամ և զնահատեմ իմ լաւ յատկութիւնները:

Քահանան կարող է մերձենալ սրբութիւններին առանց պղծելու նրանց...

Ես մօտեցայ լուսամուտին և հայեացքս մխուց անդորր և համբ խաւարի մէջ: Եւ մտածումներն կծիկը սկսեց կամաց-կամաց բացուել գլխիս մէջ, թել թելի յետևից... Ես համարեա մարմնապէս էի այդ զգում: Հարկաւոր չէ գլուխ ցաւեցնել կեանքի աւօրեայ հարցերի համար, դրանով նոր և նոր կասկածներ են ծնուում: Մտքի սղոցը մանրացնում է կեանքի արժէքները:

Ես անտանելի բնաւորութիւն ունիմ, որ հետևանք է հարուստ և կուշտ կեանքի: Զկայ ոչ ուրախութիւն և ոչ ցանկութիւն: Լիութեան և բաւականութեան մէջ մաշուում են մեր հոգեկան ոյժերը, որոնք լափում են իրար: Նրանք թմրում են պարապութիւնից, ինչպէս որ խոփը ժանգոտուում է անգործութիւնից: Ահա ինչու շատ անգամ ես ասում եմ ինքս ինձ, որ եթէ ես ստիպուած լինէի աշխատել, եթէ կարիքը ստիպէր ինձ որևէ գործի կաշել, եթէ ես ծանօթ լինէի վաղուան հոգսի հետ, ես, թերևս, աւելի թարմ, աւելի առողջ և աւելի ուրախ լինէի: Ես կը վերածնունդեի, նորից կը երիտասարդանայի և այսպէս չէի խեղդուի անլոյս, աշնանային յոռետեսութեան մէջ:

Բայց այս կողմութիւնը իր մշտական անբաւականութեան հետ միասին, այս բուրժուական մոլի վայելքները, սպանում են ոչ միայն լուրջ աշխատանքի կարողութիւնը, այլ մեռցնում են նոյնիսկ ցանկութիւնը: Եւ սեփական անկարողութեան և աննպատակ գոյութեան գիտակցութիւնը վերին աստիճանի դառն է:

Ահա թէ ինչու հասարակ ժողովրդի մէջ այնքան շատ է ոյժը, եռանդը և երջանկանալու կարողութիւնը և այնքան սակաւ են թոյլ նեարդերը: Նրանք ժամանակ չունին իրանց հոգին շուռ տալու, հետադառնելու, բաղադրիչ մասերի վերլուծելու, դառաւորելու և իւրաքանչիւր նեարդի թրթռացումներին հետևելու: Վայելքներից տկարացած մեր դասակարգը—ներվայնութեան հայրենիքն է: Եւ այս վիճակը անուանում են՝ դիւրագոցութիւն, նրբութիւն, տարբերականացում: Նրանով պարծենում են, նրան շահագործում են, նրանով հարստութիւն են գիզում: Մեր գեղարուեստը մեր նեարդերի քայքայման որրանն է: Մեր ժամանակակից կեանքը ամբողջապէս հիւանդութեան սերմերով է ցանուած: Մեր զգացմունքները բոլոր արտայայտութիւնները լեցուն են նեարդային տենդով. բայց նրանց

մէջ չկայ բուն ոգևորութիւն, որովհետեւ ոգևորութիւնն ոյժի արտայայտութիւնն է:

Ես կը ցանկանայի դուրս գալ բարդ ու խճճուած դրութիւնից և ապրել պարզ ու բնական կեանքով...

*

Սեպտեմբերի 20-ին

Ես ինձ շատ անգամ չափազանց մենակ եմ զգում: Եւ այն ոչ թէ իմ միայնութեան ժամերին, այլ երբ գտնուում եմ օտար ու անտարբեր մարդկանց շրջանում: Միայնութեան այդ զգացմունքը ընկճում է ինձ: Այդ ժամանակ մարդ իրան այնպէս կտրուած է զգում ամեն ինչից և համարում է իրան մի անպէտք մասնիկ... մի հիւլէ, որ տարւում է տիեզերքի անհունութեան մէջ... անպաշտպան, անօգնական:

Երբեմն էլ քիչ է մնում երեսի վրայ ընկնիմ և երեսայի այէս հեկեկամ:

Իմ սիրելի ծնողները չնայելով իրանց մեծ սիրուն դէպի ինձ, անկարող եղան ազատել ինձ ճնշող տառապանքից: Նոյն իսկ Գէորգի ներկայութիւնը հազուադէպ ժամերում հազիւ էր կարողանում իմ մենաւորութեան զգացմունքը ցրուել: Նրա սէրը խորն է և ուժեղ, բայց նա լայնածաւալ չէ: Այդ սէրը ձգտում է մաշել իմ անհատականութիւնը իրա ջերմութեամբ և ձուլել իմ էութիւնը իր էութեան հետ: Եւ սիրոյ այդպիսի ձգտումը ստիպում է ինձ կասկածել, թէ նա ուժեղ է: Երբ երկու հոգիներ չեն կարող կապուել իրար հետ, մնալով ամբողջ, ազատ և ինքնուրոյն, չեն կարողանալ և հասկանալ ու լրացնել միմեանց, չեն կարողանալ մերձենալ միմեանց իրանց բազմակողմանի ամբողջութեամբ, այն ժամանակ փոխադարձ հակումն էլ չի կարողանալ տալ այն բարձր երջանկութիւնը, որ գերադոյն համերաշխութիւնից է ծնունդ առնում: Եւ այն, ինչ հնարաւոր է սովորական հոգիներին, շատ անգամ հնարաւոր չէ լինում հազուադէպ և սուր անհատականութիւն ունեցող անձերի համար: Մարդիկ, որոնք մեծ տեղ են բռնում, չեն կարող իրար մօտ նստել: Նրանք կը ճնշեն միմեանց, անձնագուրկ կ'անեն, կը սպանեն իրանց զարգացման հնարաւորութիւնը: Նրանք պէտք է կորցնեն իրանց, որ յետոյ գտնեն միմեանց:

Գէորգը կ'ուզենար ձուլել ինձ իր Եսի հետ, կ'ուզենար ինձ իր առարկան, իր ոյժի խաղալիքը, իր սննեակի զարդը դարձնել:

Կան կանայք, որոնք իրանց երջանկութիւնը դրա մէջ են գտնում, նրանք հրաժարում են իրանց բոլոր առանձնայատկութիւններից և աւրողշապէս լուծւում են սիրած մարդու մէջ: Կանանց այս խաղաղ հնազանդութեան տխուր հետեանքն է՝ տղամարդու իշխող մորալը, նրա ձգտումը դէպի գերիշխանութիւնը և իր տիրապետութեան գիտակցութիւնը: Կանացի թուլութեան վրայ է հիմնում տղամարդն իր կարծեցեալ ոյժը: Բայց սա հէնց մի թոյլ հիմունք է, և տղամարդկանց հռչակաւոր ոյժը, որով նրանք արդարացնում են իրանց անժուժկալութիւնները, արդէն վաղուց առասպելների կարգն է անցել, որին մենք այլևս չենք հաւատում: Միայն այն ժամանակ կարելի է մեծ ոյժ և առողջ սերունդ ունենալ, երբ ոյժը ոյժի վրայ է հաստատուած: Այժմ մենք անհամար խոչընդոտների առաջ ենք կանգնած, որոնց պէտք է յաղթահարել: Կանայք իրանց ազատագրական ձգտումներով ահագին աղմուկ են բարձրացնում, գլուխները խփում արիւնշուայ անում, և միայն շատ հազուադիւրէն դէպքում է նրանց յաջողւում պատից մի փոքրիկ քար պոկել:—Դրա համար հարկաւոր է աւելի ուժեղ կործանելիութիւն:—Մեր ամբողջ հասարակական կարգը պէտք է այնպէս օդը թռչի, որպէս յարդը փոթորկի ժամանակ:

*

Սեպտեմբերի 21-ին:

Գէորգը հեգնում է իմ բոլոր զաղափարները՝ չափազանց գիտակցող մարդու բնորոշ ժպիտով: Նա շատ անգամ ինձ հետ վարւում է, որպէս երեխայի կամ խաղալիքի հետ: Շոյում է իմ մագերը, ականջներս քաշում է, աչքերս համբուրում է, խօսքերս հանաքի է տալիս: Իմ վրդովմունքը նրան բաւականութիւն է պատճառում. նա նոյն իսկ չի զգում, որ դրանով ինձ վիրաւորում է: Նա չի զգում նաև այն սուր խայթոցները, որոնցով լեցուն է իմ խօսքերը, նա կարծես զրահով պաշտպանուած լինի ամենաջնչին հարուածների դէմ անգամ: Դրանով նա ինձ գինաթափ է անում: Երէկ ես համը զայրոյթով քայլում էի նրա հետ Ռինգշտրասէ փողոցով:

—Ես փիլիսոփայող կիւն չեմ ուզում.—ասաց նա.—այն էլ բաւական է, որ նա նորալէպ գրել գիտէ և պատուասիրութիւն ունի:

—Ուրեմն ես մտածե՞լն էլ պէտք է մոռանամ: Այնպէս չէ.

—վրայ բերեցի ես զրգուռած:

—Այո, սիրելիս:

Նրա խաղաղ անդորրութիւնը դառնացրեց ինձ:

—Շատ լաւ. բայց դու կարող ես քո վճիռը փոխել: Մենք պաշտօնապէս դեռ նշանուած չենք.—ասացի ես կատաղութեամբ:

—Բայց, իմ անուշիկ, մենք ծածուկ ենք նշանուած և այդ աւելի մեծ նշանակութիւն ունի.—վրայ բերեց նա:

Ես լռեցի կոտորուած սրտով, հազիւ զսպելով արտասուէքներս:

Իսկ նա ասաց ընքշութեամբ ու բարութեամբ.

—Ի՞նչ փոյթ մեզ այս յիմար աշխարհը, երբ մենք այնպէս սիրում ենք իրար:

Նա իրաւիւնք ունէր:

Երբ մենք սիրում ենք իրար:

*

Սեպտեմբերի 24-ին:

Ես սիրում եմ գրել գիշերը, երբ իմ շուրջը ամեն բան ընած է առասպելական անդորրութեամբ: Այդ ժամանակ ես ինձ մենակ չեմ զգում. ինձ հետ է իմ սփոփանքը—իմ անհատականութեան գիտակցութիւնը, որը կորցնում եմ ամբողջապէս ժխտի մէջ: Այնտեղ ես դառնում եմ սովորական, հասարակական մեքենայ և ինձ ճնշում եմ բուրժուական նեղ համազգեստով... Այստեղ ինքս ինձ հետ եմ, ապրում եմ սեփական ներքին կեանքով, ականջ եմ դնում իմ գոյութեան իւրաքանչիւր խօսքին, որ խեղաւում է կեանքի աղմուկի մէջ: Գիշերը տալիս է ինձ վսեմ կարելիութիւնը աշխուժօրէն խօսելու ինքս ինձ հետ, այն խորախորհուրդ գաղտնիքների մասին, որոնք բղխում են հոգուց:

Այս ինքնամփոփման մէջ մեծ եասասիրութիւն և ունայնասիրութիւն կայ: Կարծես մարդ դնում է ինքն իրան իր սեփական մտքերի, զգացմունքների, դիտողութիւնների, խօսքերի շրջանակի մէջ... Ամեն մի շրջանակի նպատակն է բարձրացնել և զեղեցկացնել իր բովանդակութիւնը: Նոյն իսկ իր անձի առաջ մարդ էստետիքական կարիք է զգում սահմանելու իր գարշելիութիւնն ու ոչնչութիւնը:

Տարօրինակ է, որ շատ անգամ ուրիշների կոպտութիւնն ու ստորութիւնը պարզում են մարդու առաջ իր սեփական արժանիքները: Ուրիշի կեղտի մէջ մարդ, կարծես, ինքը մաքրւում է: Ֆրանսիական առածն ասում է՝ Il faut toujours un plus petit, que soi! Ես այդ այսօր զգացի:

Ես փողոցում պատահեցի Կլարա Ֆրիդրիխին: Վեց ա-

միս է, ինչ նա ամուսնացել է: Նրա ականջներում խոշոր աղա-
մանդներ են ճօճում: Նրա այտերը և մազերը մի տեսակ կար-
միր գոյն են ստացել: Շրթունքների ծալքերը աւելի խորն են
գնացել: Նա ճնշող մտերմութեամբ իր թևը անցկացրեց իմ
թևով և սկսեց ինձ պատմել մեր ամուսնական կեանքից միջ-
նադէպեր—ցուրտութիւն, անամօթ պղծութիւն, որից իմ սիրտը
տակն ու վրայ էր լինում:

—Ես իմ իդէալիս հասայ.—վերջացրեց նա իր պատմու-
թիւնը.—ես այժմ հարուստ եմ, ունիմ իմ սեփական ննջարա-
նը: Իմ ամուսինը արդէն քառասուն տարեկան է և յայտնի
Դօն Ժուան է եղել! Ես երեսայ չեմ ունենայ! Օ՛, ես երջանիկ
եմ, շատ երջանիկ:

Կատաղութիւնը տիրեց ինձ: Ես կ'ուզենայի նրա երեսին
խփել, հայհոյանքներ թափել: Նա ինքն ամբողջովին անառա-
կութեան մարմնացում էր ինձ թւում:

Քաղաքավարութեան սահմանից դուրս չգալու համար
սառն հրաժեշտ տուի և բաժանուեցի նրանից:

Երբ ես ճնշեցի դէպի նա ունեցած զգուանքս—սկսեցի մտա-
ծել Գէորգի մասին—և իմ սիրտը լցուեց մաքուր, ջինջ և պարզ
զգացմունքներով: Եւ իմ գիտակցութեան վրայով անցաւ իս-
կական, կատարեալ երջանկութեան ալիքը:

*

Սեպտեմբերի 25-ին:

Գէորգը հրեշտակի նման բարի է դէպի ինձ: Նրա խիստ
խօսքերի յետևում շատ անգամ սիրոյ և քնքշութեան փրփրա-
ցող ալիքներ են ծածկուած լինում: Նրա ամեն մի խօսքը,
ամեն մի մտածմունքը ցոյց է տալիս նրա սէրը դէպի ինձ:
Նա կը կամենար ինձ փաթաթել իր կեանքով, որպէս փափուկ
տաք վերարկուով: Նրա աչքերը շատ խորն են նայում իմ աչ-
քերի մէջ... Եւ ես զգում եմ, որ նա սաստիկ ցանկանում է
թափանցել, հետազօտել իմ հոգու բոլոր անկիւններն և իմանալ
իմ բոլոր գաղափարները:

—Քո մէջ ոչ մի խորթ բան չպիտի լինի ինձ համար,
Վերա,—յաճախ ասում է նա ինձ,—ոչ մի միտք չպիտի լինի
քո մէջ, որ ես չիմանամ:

Շատ անգամ նրա հայացքից երևում է, որ նա, կարծես,
հետևում է ինձ, մի բանից վախենում է, կասկածում է: Այն
Ժամանակ նա անդադար ինձ հետևում է, կշռում է իմ ամեն
մի խօսքը, ամեն մի շարժումը, իմ դէմքի արտայայտութեան

փոփոխութիւնը: Ես ինձ ճնշուած եմ զգում, տեսնելով նրա կասկածոտութիւնը, ինքն էլ տանջւում է: Մի անգամ հարցրի նրան. «Դու ինձ հաւատում ես, Գէորգ»: Նա յանկարծ տխրեց և ասաց. «Երբեմն!» Եւ համբուրեց ձեռքս: Բայց նրա վրայ մի ինչ որ յոգնածութիւն էր նկատուում:

— Ես վատ մարդ չեմ, Գէորգ. — ասացի ես:

— Ես այդ գիտեմ, սիրելիս. այլապէս ես քեզ կը սիրէի:

— Էլ ինչո՞ւ ես, ուրեմն երկմտում:

— Ես վախենում եմ, որ մի օր կը կորցնեմ քեզ!

— Բայց, Գէորգ, այդ անկարելի է:

Ես բազում անգամ փաթաթեցի նրա պարանոցով և համբուրեցի նրան: Այդ առաջին համբուրքս էր: Իսկ նա ինձ այնպէս ամուր սեղմեց իր կրծքին, այնպէս վայրենի ու կատաղի ձևով... որ, կարծես, այլ ևս չէր ուզում գրկից բաց թողնել: Նրա գրկախառնութիւնը, կարծես, յուսահատութեան բըռնկում լինէր: Այդ բռնկման յետևից ես նշմարեցի անզուսպ ցանկութեան տենդային սարսուռը:

Ինձ համար անբացատրելի մնաց, թէ ինչպէս այդ վայրկեանին ես կարողացայ այնպէս պարզ և սուր և սառը կերպով խորհել:

Նա կամենում էր ինձ տիրել՝ աւելի ամուր և անքակտելի կերպով շղթայելու համար: Այդ բանն ինձ վշտացնում էր: Ամենաբարձրը, որ ես կարող էի նրան տալ, նա նուաստացրեց իր մտքում իբրև նպատակ: Բայց ես այնքան ոյժ չունեցայ, որ կարողանայի ճնշել իմ մէջ ամօթի զգացմունքը և ասել նրան այդ բանը: Ո՛րքան մենք մանր, վախկոտ և թոյլ ենք մեր կեանքի ծանր ըրպէններում:

Մենք մեր աչքերը փակում ենք ճշմարտութեան առաջ, ինչպէս երկչոտ երեխաները խիստ հայեացքի առաջ:

*

Սեպտեմբերի 26-ին:

Շատ, շատ ստութիւններ են ծածկուած «ամօթի զգացմունք» կոչուող հասկացողութեան տակ: Հէնց նոյն իսկ ինքը — ամօթի զգացմունքը, եթէ հեռացնենք նրանից արհեստական փայլը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձգտում դէպի անճշմարտութիւնը: Դժուար է որոշել, թէ ինչ աստիճան թոյլատրելի է այդպիսի անճշմարտութիւնը: Կան լոյսից վախեցող

ճշմարտութիւններ, անհատական ճշմարտութիւններ, որ խուսափում են ուրիշների հայեացքներից:

Նոյն իսկ մեր սրտի ընտրեալի առաջ, աւելի արժանաւոր և աւելի փորձուած, մենք խայտարդեալ հագուստով ծածկում ենք ոչ միայն մեր մարմինը, այլ և մեր հոգին: Մենք մեր ընտրեալի առաջ կազնած ենք գաղտնիքներով փաթաթուած: Մենք պէտք է մեր դէմ կռիւ մղենք, որ կարողանանք մեր սիրոյ հետ միասին բանալ նրա առաջ նաև մեր մարմինը: Բայց յաճախ մեր ամբողջ կեանքում մենք ծածկում ենք նըրանցից, ինչպէս նաև ինքը մեզանից, մեր հոգու մերկութիւնը...

Ամօթի զգացմունքը մեր ձեռքով սնուած կեղծիք է: Առաջին մարդիկը չգիտէին, թէ ինչ է ամօթը: Մերկութիւնը նրանց համար բնական էր: Նրեխաները նոյնպէս չունին ամօթի զգացմունք:

Իսկ մենք, խելացի, քաղաքակրթուած մարդիկս, մենք օգտուում ենք մեր մերկութիւնից:

Ինձ թւում է, անառակութիւնը հագուստի հետ միասին է աշխարհ եկել:

*

Սեպտեմբերի 28-ին:

Այսօր առաւօտեան ես Գէորգի հետ միասին գնացի Դօրնըրախ: Մենք անտառով էինք անցնում: Պաղաղ էր և ոչ մի մարդ շուրջը: Միայն չորացած տերևներն էին խշխշում մեր ոտների տակ: Արևի ճառագայթները թափանցում էին ճիւղերի արանքից և պարում էին գորշ դեմանի վրայ: Մենք քայլում էինք հանդարտ, ճանապարհից հեռու, ձեռք-ձեռքի տուած: Մեր շուրջը ինչ-որ ջերմութիւն, պարզութիւն և մանկութիւն էր տիրում: Մեզանից և ոչ մէկը չէր ուզում առօրեայ զրոյցով խանգարել այդ ժամի վեհութիւնը:

Նրբեմն Գէորգը կամացուկ սեղմում էր իմ ձեռքը: Ես զգում էի, որ նա այդ րոպէին մի լաւ և քնքոյշ բանի մասին էր մտածում, այդ երեւում էր ձեռքի սեղմելուց:

Այդ տեսակ ըրպէներում մենք ապրում ենք ընդհանուր կեանքով: Մեր մէջ չկայ ոչ մի օտար զգացմունք, ոչ մի գաղտնի մտածմունք: Նոյն իսկ զգայնական ցանկութիւնը լըռում է: Անսահման հաւատարմութիւնը, սիրոյ խորը զգացմունքը միտաբան թելով կապում են հոգին հոգու հետ: Ինձ թւում էր, թէ ես եկեղեցում եմ գտնւում: Ես կը կամենայի ընկնել ծնկաչոք և ծալել բազուկներս աղօթելու համար: Իմ

մէջ զարթնեց իսկական և ճշմարիտ բարեպաշտութիւնը, իսկ յետոյ ձգտում՝ լինել բոլորովին մաքուր և բարի, անսահման բարի և սեփական երջանկութիւնը զոհել ուրիշների համար, ձգտում դէպի անձնագոհութիւն... Այսպիսի ընդէններում սիրում են բոլոր մարդկանց... և ամեն բան աշխարհիս երեսին սրտի մօտ է թւում... և կեանքի բոլոր մեղեդիները ճշում և երգում են... Մարդկային բոլոր գեղեցկութիւնները հաւաքւում են միասին և հոսում սիրոյ հեղեղի հետ միասին: Մի մարդ, որ երբեկից է սիրել է, չի կարող բոլորովին այլանդակուել: Այնքան ազնւութիւն, վեհութիւն և մաքրութիւն է պարունակում իր մէջ ճշմարիտ սէրը: Նա լուսաւորում և տաքացնում է մեր գոյութեան ամենամութ և ծածկուած անկիւններն անգամ:

Շատ անգամ ինձ անհասկանալի է թւում, թէ ինչպէս ես իմ կեանքի 20 տարին կարողացայ ապրել խաւարի մէջ—ապրել առանց նպատակի, օր-օրի յետեից... ես ինչպէս առհասարակ գոյութիւն ունէի առանց Գէորգի... Այն ժամանակ օրերս անցնում էին տաղտկալի և մեռած: Այն ինչ մեր երկու տարուայ սիրոյ ամեն մի վայրկեանը յոյս է ծնում, ամեն մի ժամը—մի նոր զգացողութիւն, իսկ ամեն մի օրը ապագայի հակադիր պատկերը ներկայացնում: Ամեն մի վիշտ լցուած է գեղեցկութեամբ... Նոյնպէս և ուրախութիւնը: Ես խղճում եմ այն աննշան և խեղճ մարդկանց, որոնց առաջ փակուած է այս դրախտը...

Այդ բոլորին Գէորգը միևնոյն բանն էր զգում: Մենք նստեցինք զաշտում, փոքրիկ հողաթումբի վրայ, սեղմուեցինք իրար և սկսեցինք անցեալը մտաբերել և շատ մանրամասնութիւններ մենք յիշեցինք մեր առաջին և երկչոտ բարեկամութեան ժամանակաշրջանից:

Մենք աշխատում էինք գտնել մեր սիրոյ առաջին սերմերը: Ամառային մի տաք գիշեր էր, հրը մենք առաջին անգամ պատահեցինք միմեանց: Վալցկամերգութեամբ... զրօսանքի ժամանակ... Լուսինը փայլում էր—մենք չճանաչեցինք միմեանց, նոյն իսկ նախապաշարուած էինք մէկ-մէկու դէմ... Յետոյ մի ինչ-որ անբացատրելի հակում կապեց մեզ իրար հետ մեր ընդհանուր յատկութիւնների միջոցով և խիստ զինեց մեզ իրար դէմ, մէր մէջ եղած տարբերութիւնների պատճառով: Մեր սիրոյ ծնունդը կռիւ էր... յամառ դիմադրութիւն և փառաւոր յաղթանակ:

Մենք ծիծաղում էինք, յիշելով այն ժամանակը, երբ մեզ բաժանում էին պայմանական պատնէշները և ստրկացնում

զանազան ձևականութիւնները, երբ նա ինձ «համեստափայլ օրիորդ» էր անուանում, իսկ ես նրան՝ «պարոն դոկտոր»:

Մեզ համար ծիծաղելի էր յիշել և մեր առաջին երկչոտ տեսակցութիւնը (rendez-vous). ես վախից ամբողջովին դողում էի, իսկ նրա աչքին երևում էին բամբասաւէր ծանօթների ստուերները...

Այդ ժամանակուանից մեր մէջ շատ բան է փոխուել: Մենք մի կողմ ենք դրել արտաքին համեստութեան զգացմունքը: Անհոգ և համարձակ մենք գնում ենք մեր սիրոյ ճանապարհով:

Եւ եթէ իրականան Գէորգի յոյսերը, ամենաշատը մի տարուց յետոյ մենք կը պատկանենք իրար... ընդմիշտ...

Աշխարհ մեզ համար միայն հիմք է, գետին, որի վրայ մենք կառուցանում ենք մեր կեանքի գեղեցիկ շէնքը...

*

Սեպտեմբերի 29-ին:

Ծնողներս գաղտնի կերպով կուռում են իմ սիրոյ դէմ: Սկզբում միայն կծու ակնարկներ էին: Իսկ այժմ արդէն ասպարէզ է եկել բարոյագիտական մահակը: Իմ թանկագին ծնողները, չնայելով դէպի ինձ ունեցած սիրուն, այնքան կարճատես են, որ կարծում են, թէ հարգւած ամուսինը կը բախտաւորեցնէ իրանց զաւակին:

—Սէր ասած բանը յիմարութիւն է, ասում է հայրս.— դատարկ խօսքեր, վիպական դատարկաբանութիւն: Եթէ երկար նշանուած մնաս, սիրուդ գերեզման կը փորես: Մայրդ և ես դեռ նոր էինք ծանօթացել, երբ նշանուեցինք—և մենք երջանիկ եղանք...

—Բայց դա մի բախտաւոր դիպուած է, չերկչոտութեամբ նկատում եմ ես:

—Զայնդ,—վրայ բերեց մայրս իր սովորական կոպիտ եղանակով: Քեզ համար հաճելի կեանք ստեղծեցիր, սէրը ինքն իրան էլ կը գայ: Դատարկ մտւորի առաջ ձիերը կը սկսեն իրար կրծել:

Այս տեսակ ֆիլիստերական խօսակցութիւնների ժամանակ իմ ամբողջ մարմնի միջով մի սառուտ է անցնում:

Եւ երբ իմ հայրը վերջացնում է իր խրատները հետեւեալ խօսքերով. «Մի մոռանալ, որ մենք քեզանից խելացի ենք, և որ ամենագլխաւորն է, աւելի փորձուած», ես առարկում եմ վճռողաբար. «Ես էլ եմ կամենում փորձառութիւն ձեռք բերել»:

Այս տեսակ ընդհարումներից խուսափելու համար ես ու Գէորգը, մեր առօրեայ կեանքի հետ միասին, ապրում ենք նաև գաղտնի կեանքով... Մեր այս երկմիտ կացութիւնը կը վերջանայ այն ժամանակ, երբ Գէորգը միջոց ձեռք կը բերէ ամուսնական կեանքի համար: Եւ այն ժամանակ իմ ազատ ընտրութեան իրաւունքը ստանալու համար՝ ես եռանդուն կերպով կը կռուեմ, եթէ իհարկէ կռիւն անհրաժեշտ լինի: Եւ ամեն բան կը զոհեմ դրա համար... Ամեն բան... Եւ եթէ սիրեցեալ զստերը մերժեն, այն ժամանակ իմ սէրը կը նուաճէ, ձեռք կը բերէ այն ինչ որ նրան մերժում են: Ես կարիքից չեմ վախենում: Ես չեմ վախենում փիղիքական զրկանքներից... Նոյնպէս աշխատանքից, պատասխանատուութիւնից, պարտականութիւններից: Ես իմ ամբողջ էութեամբ ձգտում եմ դէպի լուրջ և բովանդակալից կեանքը: Իմ մեծագոյնը ինձ դարձրել է վաղաժամ հասունացած, ուժեղ և ինքնուրոյն: Ես ուզում եմ իմ ոյժերը գործադրել... անել այն ինչ կարող եմ:

Արտաքին կեանքի վտանգները ինձ չեն սարսափեցնում: Եթէ ես իմ սեփական գաղտնի ճանապարհներում, իմ հոգու լաբիրինթոսում չմոլորուիմ—արտաքին կեանքը ինձ ղինուած կը գտնի: Նրան չի յաջողուի ինձ ֆիլիստեր դարձնել, երբէք, երբէք: Աւելի լաւ է նաւը խորտակուի բաց ծովում, կատաղի ու դաւաճան ալիքների մէջ, քան թէ խաղաղնաւահանգստում: Ես չունիմ ոչ վախ և ոչ զղջում: Դրանք ինձ համար դատարկ հիմքերից զուրկ բառեր են:

Շատ կարելի է, որ իմ համոզմունքների սուր արտայայտութիւնը զրկում է ինձ շատ և շատ ուրախութիւնից: Շատ կարելի է, որ իմ հաստատակամութիւնը ինձ համար տանջանքների պատճառ դառնայ: Գուցէ այլ կերպ լինէր, եթէ մի եղբայր ունենայի: Այն ժամանակ ես բոլորովին ուրիշ ուղղութեամբ կը զարգանայի: Ես այն ժամանակ աւելի շուտ պատուտակ կը լինէի, քան թէ պատ: Չէ որ կիներ իր հոգեբանական—ֆիզիքական կազմով ծնուած է աւելի շուտ պատուտակ լինելու:

Սակայն կնոջ հոգու մէջ մի քանի լարեր կան, որ տղամարդու ազդեցութեան տակ միայն երիտասարդ հասակում կարող են հնչել: Հօրս հետ կապուած եմ խորը և երկիւղած սիրով, բայց մեր հոգեբանական կեանքի տարբերութիւնը հէնց սկզբից անկարելի դարձրեց նրա ազդեցութիւնը ինձ վրայ: Իսկ որևէ ուրիշ տղամարդու հասարակութիւնից ես բոլորովին ծածկուած եմ եղել: Երկու սեռերի բարեկամական ազատ յարաբերութիւնը մինչև այժմ էլ արգելուած է և դրա համար էլ

նա համարուում է դայթակդեցուցիչ, վտանգաւոր և փշալից։ Մարդ կարող է դրանով իր վարկը գցել, բաժբասանքների տակ ընկնել։ Եւ օրիորդի մաքրութիւնը—նրա ամենաթանկագին գանձը—հասարակական կարծիքի առաջ կ'արատաւորուի։ Ո՛ր պիտի խղճալի վկայական այդ մաքրութեան համար։ Բայց սիրելի կարճատես ծնողները, որ մեծ եռանդով արգելում են իրանց աղջիկներին որեւէ tète-a'-tête տղամարդու հետ, բոլորովին ընտանիքն համարում, երբ նրանք պարահանդէսներում՝ կիսամերկ գրութեամբ մէկ գրկից դէպի միւսն են թրուշում, և երբ նրանց ականջին ամենազղուելի խօսքերն են շնչում։ Սա, իհարկէ, բարոյականութեան պահանջներին անհամապատասխան է, բայց համապատասխան է սովորութիւններին։ Հէնց բանն էլ դրանում է։

Բաժանման այս տեսակ սիստեմը մասամբ մեղաւոր է, որ երկու սեռերի փոխադարձ յարաբերութեան ժամանակ առաջ է գալիս լարուած մոմենտ և անբարոյականութեան շեշտակի հարուած։ Երանի՛ր այն սերունդին, որ աւելի լաւ և առողջ ժամանակներ կը տեսնի։

*

Հոկտեմբերի 2-ին։

Այսօր ես Գէորգի հետ մի փոքրիկ վէճ ունեցայ որ մի քանի ժամուայ տարաձայնութեան առիթ տուեց։ Իմ սիրելի Գէորգը քիչ էր մնում, որ խելագարուէր խանդից։ Հանս վալդաու, որ նրանից մի քանի տարի առաջ, պարերի դասերի ժամանակ սիրահարուած էր ինձ վրայ, համարձակուեց իմ ձեռքը համբուրել։ Գէորգը չէր կարողանում ներել նրա այդ յանցանքը և ինձ պատասխանատուութեան էր ենթարկում։

—Իմ նշանածը չպիտի թոյլ տայ օտար տղամարդուն իր ձեռքը համբուրելու... հասկանո՞ւմ ես։

Ես աշխատում էի նրան հանգստացնել։ Սակայն իզուր։ Զայրոյթով լցուած նրա բառերը հեղեղի նման թափուում էին գլխիս։

—Դու կոքէտութիւն էիր անում նրա հետ. դուք փոխադարձաբար իրար էիք նայում. դու նրա հետ արդէն մի անգամ սիրային յարաբերութիւն ես ունեցել։ Ասա դու ինձ միայն պարզը, եթէ այդ դատարկագլխին գերադասում ես ինձանից... Ասա դու ինձ միայն...

Եւ այդ ուղղութեամբ դեռ երկար շարունակուեց վէճը։ Տղամարդու բռնակալ և իշխող բնւորութիւնը պարզ երևում էր նրա զայրացած խօսքերի մէջ։

Ես գուցէ սաստիկ բարկանայի, եթէ Գէորգն հէնց նոյն իսկ այդ խանդավառ զայրոյթի ժամանակ այնքան քաղցր չերևար...

Չկայ մի կին, որ բաւականութիւն չզգայ, տեսնելով, որ իր սրտի ընտրեալը տանջուում է՝ դէպի իրան ունեցած սիրուց։ Ես ուղղակի հրճուում էի, տեսնելով նրա անտեղի կատաղութիւնը։

Մի քանի ժամից յետոյ նա արդէն բեկուած սրտով ներողութիւն էր խնդրում։ Այն ժամանակ ես խոստովանեցի ինչ որ զգում էի։ Նա չժպտաց։ Նա հեղութեամբ համբուրեց իմ ձեռքը։ Նրա հայեացքը տխուր էր։

*

Հոկտեմբերի 4-ին

Ես դարձեալ չեմ կարողանում քնել։ Մթութեան միջից դուրս են սողում երկիւղի քաօսական զգացմունքները և իմ մտքերի հետ շաղկապուելով մի խառնիճաղանձ շղթայ են կազմում։

Ես վառեցի ճրագը և վերցրի գրիչս, կամենալով ցրուել ինձ ճնշող ոյժերը։ Եւ ահա ես նստած եմ, դատարկ, անմիտ բաներ եմ գրում, աշխատելով խլացնել մերթ յուսահատութիւնը և մերթ կարօտը, որ կտոր-կտոր է անում իմ սիրտը...

Եթէ Գէորգը զգար իմ փափագը և գար ինձ մօտ... հէնց հիմա, այս վայրկեանին։ Եթէ նա կամացուկ դուռը բաց անէր և անունս շնչէր... Իր քնքոյշ և փաղաքշող ձայնով... Նրա խօսքերը շատ անգամ նմանում են համբոյրների... Ի՞նչպէս նրան դէմ կը վազէի, նրա գիրկը կ'ընկնէի և գլուխս կը թագցնէի նրա կրծքի վրայ... Ի՞նչպէս ես ներքուստ կը հըրճուէի նրա զրկում... Ի՞նչպէս ես նրա համբոյրները կ'ուզեմս, յի ծծել։ Ինձ թւում է, թէ ես այդ բոպէին նրան անձնատուր կը լինէի։ Երբեմն ներքին անհրաժեշտութիւններ են պատահում։ Այդ բոպէին ես չէի կարողանայ ընդդիմանալ։ Ամբողջ հոգովս ձգտում եմ դէպի անսահման անձնագոհութիւն, կամենում եմ արբեմալ խենթ սիրով։ Ինձ թւում է, թէ իմ նեարգերի վրայով մըլիւններ են սողում։

Ես կամենում եմ գրկել իմ բարձը, թաղել երեսս նրա մէջ և լաց լինել

Իմ կրքի բռնկումները յանկարծակի են, անկախ, որպէս իմ էութիւնը։ Ես ուժասպառ եմ լինում ճնշող կարօտի ծանրութեան տակ։

Ես տանջւում եմ իմ շրջապատի ժառանգական նախա-
պաշարմունքներէրէց...

Ես զընդացնում եմ շղթաներս, ոյժ չունենալով նրանց
թօթափել...

*

Հոկտեմբերի 5-ին:

Այսօր առաւօտեան, երբ ես արդէն սովորական, նորմալ
դրութեան մէջ էի—այդ վաղ ժամին անակնկալ կերպով յայ-
տնուեց Գէորգը. նա, առանց բաղխելու սենեակիս դուռը, ներս
վազեց: Ես առաւօտուայ զգեստով էի և պատրաստուում էի մա-
զերս սանրելու: Նա ոչ ներողութիւն խնդրեց և ոչ էլ իր սովո-
րական բարի լուծն ասաց. այդ բոլորի փոխարէն նա գրկեց
ինձ, սեղմեց իր կրծքին և պինդ համբուրեց շրթունքներս...

—Վերա, եթէ գիտեսնաս, թէ ի՞նչպէս էի փափագում քեզ
տեսնել այս գիշեր:

Ես անկարող եղայ մի բառ արտասանել: Այդ րոպէին ես
հաւատում էի հրաշքների: Եւ իսկապէս: Այսպիսի զուգահի-
պութիւնը բացատրուում է նրանով, որ մեր զգացմունքները՝
արտաքին միանման դէպքերի ազդեցութեան տակ, մի տեսակ
ուղղութիւն էին ունեցել:

Գէորգը չէր կարողանում իրան զսպել. ես նրան այդպէս
ոչ մի անգամ չէի տեսել: Նա մեծ հրճուանքով շոյում էր իմ
մազերը. միւս ձեռքով նա պինդ բռնել էր իմ մերկ բազուկը:
Նրա այտերը այրւում էին: Նրա հայեացքը ինձ կլանում էր:
Միևնոյն ժամանակ նա վիրաւոր դազանի նման տնջում էր:
Ես կամացուկ ձեռքս մօտեցրի նրա ճակատին:

—Ի՞նչ պատահեց քեզ, Գէորգ, հարցրի ես:

—Ուրախութիւն, Վերա, մի մեծ ուրախութիւն, մրմըն-
ջաց նա:

—Տարօրինակ ուրախութիւն է: Ինչի՞ վրայ ես այդքան
ուրախանում:

—Դու այժմ ինձ ես պատկանում Վերա, ինձ, միայն ինձ.

—ճշաց նա և նորից ջղաձգօրէն ինձ գրկեց:

Եւ երբ ես նրա գրկեց ազատուելով, խնդրեցի աւելի
պարզ ասել բանն ինչու՞մն է, նա յայտնեց, որ ինքը այսօր ա-
դիւնկտ է նշանակուած և որ մենք կարող ենք պսակուել...
Հէնց այսօր, վաղը—որքան կարելի է շուտ...

Ես պարզ կերպով լսում էի սրտիս բաբախումը... Սար-
սուռն անցաւ իմ ամբողջ մարմնով... Իմ ամբողջ էութիւնը լը-

ցուեց անսահման երջանկութեամբ... Բայց դա միայն մի վայրկեան տևեց:

Ես հազիւ կարողացայ միայն արտասանել.—ճիշտ ես ասում, Գէորգ:

—Դու, կարծես, ուրախ չես.—նկատեց նա և նորից ըսկըսեց ինձ համբուրել.—իմ կի՛նս. իմ սիրելի՛, պաշտելի՛ կի՛նս. —շնչում էր նա:

Ի՛նչ հրաշալի էր արտասանում նա «կին» խօսքը: Նրա ձայնի մէջ լսուում էր տղամարդու ամբողջ ոյժն ու քնքշութիւնը: Բայց միևնոյն ժամանակ լսուում էր նաև անսահման տիրապետելու, յաղթելու հրճուանքը:

Այդ բոլորին ներս մտաւ մայրս: Հէնց առաջին հայեացքից ես նկատեցի, որ նա անբաւական է Գէորգի վաղաժամ այցելութիւնից:

Նրա կշտամբանքներից նախագգուշանալով, ես բղաւեցի.—Գէորգը աղիւնկտ է նշանակուած: Վաղը մենք պսակոււմ ենք, —աւելացրի ես մեքենայաբար, առանց մտածելու իմ ասածի վրայ:

Մայրս գունատուեց, գրկեց ինձ ու Գէորգին և վշտալի հնազանդութեամբ խրատական մի ամբողջ ճառ արտասանեց, ինչպէս այդ անում են մայրերը այսպիսի դէպքերում: Բայց նրա խօսքերի մէջ երևում էր մեծ սէր և նոյնպէս ծածուկ հոգս ու թախիծ: Սա մի նշանաւոր, հանդիսաւոր և պաթետիկ մոմենտ էր: Ես գլուխս դրի Գէորգի կրծքին և, չգիտեմ ինչու, լաց եղայ: Մայրիկը թաշկինակով աչքերս էր սրբում: Գէորգը զրուպեց իրան և սկսեց քնքոյշ ու բարի խօսքեր ասել: Վերջապէս մենք սկսեցինք վիճել հարսանիքի օրուայ մասին և ոչ մի կերպ համաձայնութեան չէինք գալիս: Այդ բոլորը այնպէս ծրագրուած էր—վայելուչ, ինչպէս ընդունուած է բոլորժողովան ընտանիքներում...

Եւ երբ ես մենակ մնացի, միայն այն էի զգում, որ ես հոգեպէս թոյլ ու ճնշուած եմ և որ իմ սպասած երջանկութիւնն ինձ խաբեց: Անօգուտ ես խառնեցի իմ հոգու բոլոր ծածկուած անկիւնները, աշխատելով գտնել ուրախութեան գոնէ մի նշան... Եւ ես ամաչում էի, որ նպատակիս հասնելու բոլորին ոգևորութիւնն ինձանից հեռացաւ...

(Կը շարունակուի)